ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 254. Շրջանառության հարկ վճարողները

3) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, ~~արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները,~~ ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, աուդիտորական կազմակերպությունները.

Հոդված 267. Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները

4) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի~~, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի~~ գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, աուդիտորական կազմակերպությունները.

Հոդված 381. Հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները

5. Արտարժույթի ~~կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի~~ գործունեություն իրականացնողները դրամական հաշվարկներն իրականացնում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայով կամ դրան փոխարինող և նույն պահանջները բավարարող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներով:

8. Արտարժույթի ~~կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի~~ գործունեություն իրականացնողների կողմից կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներին և ցանցային կապի միջոցներին ներկայացվող պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների կիրառության կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ հարկային մարմնի հետ համատեղ:

Հոդված 382. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողների պարտականությունները

1. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են՝

1) պահպանել Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնները.

2) հսկողական գործառույթների իրականացման նպատակով ապահովել հարկային մարմնի պաշտոնատար անձանց անարգել մուտքը դեպի հսկիչ դրամարկղային մեքենայի տեղադրման վայր.

3) ապահովել ցանցային կապի միջոցներով յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով (այդ թվում՝ արտարժույթի ~~կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի~~ գործունեության մասով կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայով, համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումով) օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին:

Հոդված 383. Հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության թույլտվությունը

1. Արտարժույթի ~~կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի~~ գործունեության մասով կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայի, համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորման, ինչպես նաև համակարգչային ծրագրի կիրառության թույլտվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով հարկային մարմնի հետ:

Հոդված 384. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող անձանց գործունեության կասեցումը, կասեցմանմասին որոշումների ընդունումը և կասեցման ավարտը

8. Գործունեության կասեցման մասին հարկային մարմնի որոշման քաղվածքը հարկային մարմինը փակցնում է կասեցման ենթակա գործունեության վայրի մուտքի մոտ՝ հաճախորդների և գնորդների համար տեսանելի մասում, իսկ արտարժույթի ~~և արտարժույթի դիլերային-բրոկերային~~ առք ու վաճառքի գործունեության կասեցման դեպքում՝ հարկային մարմնի որոշման ընդունման պահից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին հարկային մարմինը գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:

Հոդված 414. Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները սահմանված կարգով չգրանցելը

1. Արտարժույթի առք ու վաճառքի~~, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի~~ գործունեություն իրականացնողների կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ չգրանցված գործառնությամբ փոխանակված արժույթի ընդհանուր գումարի՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով, 25 տոկոսի չափով:

2. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ չգրանցված գործառնությամբ փոխանակված արժույթի ընդհանուր գումարի՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով, 50 տոկոսի չափով:

3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտի կամ ուսումնասիրության արձանագրության ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտի նախագծի կամ ուսումնասիրության արձանագրության նախագծի ամսաթիվը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը կատարելը: